ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԱՐԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՑԱՆՑՈՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18>>

ք. Երևան << 11 >> փետրվարի 2016թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ >> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման և արբանյակային կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **269 802 000 (երկու հարյուր վաթսունինը միլիոն ութ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 1-ին չափաբաժնով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 221 880 000 (երկու հարյուր քսանմեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 47 922 000 (քառասունյոթ միլիոն ինը հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան Տերյան 19, բն 4
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 900011017101	Հ/Հ 217001264993001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Յուքոմ» ՍՊԸ-ի անվամբ
Ա.Արզումանյան	**Հ.Գրիգորյան**

Հավելված 1
«11» փետրվար 2016թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Ֆինանսների նախարարության տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ

ՀՀ ՖՆ տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցը (այսուհետ՝ ցանց) ապահովում է էլեկտրոնային կապը վերադաս մարմնի և իր ստորաբաժանումների միջև:

Ցանցը պետք է ապահովի տեղեկատվության փոխանակման շուրջօրյա հնարավորություն, ներառելով ոչ աշխատանքային օրերը և ժամերը: Ցանցը պետք է լինի պաշտպանված, փակ ցանց և չպետք է լինի կապված ոչ մի այլ համակարգչային ցանցերին:

Կատարողը պետք է ապահովի ցանցում տվյալների փոխանցման արագությունը, անվտանգությունը և գաղտնիությունը:

Կատարողը պետք է Երևան քաղաքի տարածքում ցանցի հետ կապված առաջացող խնդիրները լուծել 5 ժամվա ընթացքում: Խնդրի լուծումից հետո իրազեկել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետին:

Կատարողը պետք է Երևանից դուրս գտնվող ցանցում առաջացող խնդիրները լուծել 24 ժամվա ընթացքում: Խնդրի լուծումից հետո իրազեկել ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետին :

Կատարողը պետք է ապահովի նաև ցանցի շուրջօրյա սպասարկումը և տեխնիկական աջակցումը:

Քսանչորս ժամից ավել տևողությամբ անջատումներն անթույլատրելի են:

Կատարողը պետք է իրականացնի ցանցի նախագծման, կառուցման և հետագա սպասարկման ծառայությունները: Կատարողը ցանցը նախագծելիս պետք է կիրառի արագագործ, ապահով և ժամանակակից տեխնոլոգիաներ: Ցանցի նախագծման ժամանակ կատարողը պետք է ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի հետ համաձայնեցնի կիրառվելիք տեխնոլոգիաները:

Կատարողը պետք է որոշի, թե ինչպիսի արտաքին սարքավորումներ և ծրագրեր են անհրաժեշտ ցանցը միացնելու կամ վերակառուցելու համար, ինչպես նաև ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության պետի հետ համաձայնեցնի նախագծի նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում ներկայացնի հիմնավորումները և ապահովի նախագծի ներդրման ընթացքը:

Կատարողը պետք է ծառայությունների ընդունումից հետո կատարի մեկ տարվա երաշխիքային սպասարկում:

Առաջին չափաբաժին

Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ /Օպտիկամանրաթելային կապի միջոցներով տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ/

N	Անվանում	Նկարագրությունը
1.	**Տվյալների փոխանակման ծառայություն**	Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի նախարարությանը ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ ՀՀ Ֆինանսների նախարարության ներքին ցանցային ենթակառուցվածքում: Առանձնացված կապուղի՝ *Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում երկու հիմնական ուղղություններով կրկնակի լարանցումներով ք. Երևան Սիարոնյան 12/3, ք. Դիլիջան պարզ լիճ 4 հասցեներով յուրաքանչյուրը 10Gb/s թողունակությամբ:* Առանձնացված կապուղու հատկանիշներ՝ *Ապահովել ցանկացած կետում ցանկացած VLAN Id օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև VLAN Id-ների կիրառման հնարավորություն, օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) պլանավորվող յուրաքանչյուր կետում: Ապահովել ուղղորդում (routing) վերոնշյալ Layer2 խմբերի միջև:* Հավելված 1-ում նշված է դեպի վերոգրյալ հասցեներ օպտիկամանրաթելային կապուղու տրամադրում և նվազագույն արագությունների թողունակությունների ապահովում:
2.	**Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն**	Սիմետրիկ արագությամբ երաշխավորված (CIR) առանց տրաֆիկի որևէ սահմանափակման ինտերնետ հասանելիություն: Անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում, օպտիկամանրաթելային կապուղիների սպասարկում, բաժանորդների սպասարկման ծառայություն (Help Desk), ինչպես նաև իրականացնի ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: Ինտերնետ կապ՝ *Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում դեպի ՀՀ ՖՆ ՏՏԵՆԶԿ (ք. Երևան Սիարոնյան 12/3 և ք. Դիլիջան պարզ լիճ 4) առնվազն 300mb/s, առնվազն 500 mb/s ՀՀ տարածքում գործող .am և այլ տիրույթներում արագությամբ. ինչպես նաև x.x.x.0/24 (real ip) հասցեների տիրույթի տրամադրում:*

Հավելված 1

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Օպտիկ. կապ. ծառ. տրամ. սկզբնաժամկետ	Արագություն
1.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	ք.Երևան, Մելիք-Ադամյան փող. 1	*****	2Gb/s****
2.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	ք.Երևան, Աիարոնյան փող. 12/3	*****	10Gb/s****
3.	ՀՀ ՏԵՆ ուսումնական կենտրոն	ք. Դիլիջան, Պարզ լիճ փող. 4	մինչև 31.03.2016*****	3Gb/s****
				10Gb/s****
4.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	ք.Երևան, Մ.Խորենացու-3,7,	*****	2Gb/s****
5.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	ք. Երևան, Կոմիտաս-35	*****	1Gb/s
6.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	Ք.Երևան,Դեղատան-3	*****	1Gb/s
7.	ՀՀ ՏԵՆ վերադաս մարմին	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10	*****	2Gb/s****
8.	ՀՀ ՏԵՆ Ուսումնական կենտրոն	ք. Երևան, Կոմիտաս-35	*****	100Mb/s
9.	ՀՀ ՏԵՆ Ուսումնական կենտրոն	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10	*****	100Mb/s
10.	ՀՀ ՏԵՆ Ուսումնական կենտրոն	ք. Երևան, Աիարոնյան-12/3	*****	100Mb/s
11.	Խոշոր հարկ վճարողների ՀՏ	ք. Երևան, Կոմիտաս-35	*****	100Mb/s
12.	Արաբկիրի ՀՏ	ք. Երևան, Կոմիտաս-35	*****	100Mb/s
13.	Կենտրոնի ՀՏ	ք. Երևան, Դեղատան-3	*****	100Mb/s
14.	Էրեբունու ՀՏ	ք. Երևան, Ս. Դավիթի 87ա	*****	100Mb/s
15.	Մաշտոցի ՀՏ	ք. Երևան, Շինարարների փ. 3ա	*****	100Mb/s
16.	Նոր Նորքի ՀՏ	ք. Երևան, Մոլդովական 41/3	*****	100Mb/s
17.	Շենգավիթի ՀՏ	ք. Երևան, Մանթաշյան փ. 27ա	*****	100Mb/s
18.	Աշտարակի ՏՀՏ	ք. Աշտարակ, Պռոշյան 29	*****	50Mb/s
19.	Ապարանի բաժին	ք.Ապարան, Բաղրամյան 26	*****	10Mb/s
20.	Արթիկի բաժին	Ք.Արթիկ, Բաղրամյան 4	*****	20Mb/s
21.	Թալինի բաժին	ք.Թալին, Խանջյան 9	*****	20Mb/s
22.	Արմավիրի ՏՀՏ	Ք.Արմավիր, Չարենցի-24	*****	100Mb/s
23.	Արտաշատի ՏՀՏ	Ք.Արտաշատ, Օգոստոսի-23, 83	*****	100 Mb/s
24.	Գավառի ՏՀՏ	Ք.Գավառ, Գր.Լուսավորչի-12/2	*****	100 Mb/s
25.	Գյումրու ՏՀՏ	Ք.Գյումրի, Հովսեփյան-1ա	*****	100 Mb/s
26.	Գորիսի ՏՀՏ	Ք.Գորիս, Տաթևանցու-9	*****	50Mb/s
27.	Եղեգնաձորի ՏՀՏ	Ք.Եղեգնաձոր, Նարեկացի-8/3	*****	50Mb/s
28.	Էջմիածնի ՏՀՏ	Ք.Էջմիածին, Մաշտոցի-83ա	*****	50Mb/s
29.	Իջևանի ՏՀՏ	Ք.Իջևան, Մելիքբեկյան-3	*****	50Mb/s
30.	Նոյեմբերյանի բաժին	ք.Նոյեմբերյան, Երևանյան 4	*****	20Mb/s
31.	Դիլիջանի բաժին	Ք. Դիլիջան, Մյասիկյան 66	*****	20Mb/s
32.	Կապանի ՏՀՏ	Ք.Կապան, Սինասյան փողոց 20 ա	*****	50Mb/s
33.	Մեղրու բաժին	ք.Մեղրի, Ք.Անդրանիկի 2	*****	20Mb/s
34.	Կոտայքի ՏՀՏ	Ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1	*****	100 Mb/s
35.	Հրազդանի ՏՀՏ	Ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1	*****	50Mb/s
36.	Մասիսի բաժին	Ք.Մասիս, Քաղաքապետարանի շենք	*****	10Mb/s
37.	Մարտունու բաժին	Ք.Մարտունի, Շահումյան-2	*****	20Mb/s
38.	Նաիրիի ՏՀՏ	Ք.Եղվարդ, Երևանյան-10ա	*****	50Mb/s
39.	Սևանի ՏՀՏ	Ք.Սևան, Սայաթ Նովա 1/1	*****	50Mb/s

40.	Ճամբարակի բաժին	Ք. Ճամբարակ, Գ. Նժդեհի 125	*****	10Mb/s
41.	Սիսիանի բաժին	Ք.Սիսիան, Սիսակյան-41գ	*****	20Mb/s
42.	Վանաձորի ՏՀՏ	Ք.Վանաձոր, Վարդանանց 11	*****	100Mb/s
43.	Թումանյանի բաժին	Ք.Ալավերդի, Թումանյան 1ա	*****	20Mb/s
44.	<<Զվարթնոց>> Մաքսատուն	Զվարթնոց օդանավակայան, բեռնային և ուղևորային մասնաշենքեր	*****	100Mb/s**
45.	Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների Մ/ՄՏ	Ք.Երևան, Արշակունյաց-127/21	*****	200Mb/s
46.	Արարատյան տարածաշրջանային ՄՏ	Ք.Երևան, Իսակովի-10	*****	100Mb/s
47.	Ակցիզային հարկով հարկվող ապրանքների Մ/ՄՏ	Ք.Երևան, Իսակովի-10	*****	100Mb/s
48.	Միջազգային ճանապարհային փոխադրումների Մ/ՄՏ	Ք.Երևան, Իսակովի-10	*****	100Mb/s
49.	Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների Մ/ՄՏ	Զվարթնոց օդանավակայան	*****	100Mb/s**
50.	Շիրակի տարածաշրջանային ՄՏ	Ք.Գյումրի, Խորենացի 21	*****	100Mb/s
51.	Բավրայի մաքսակետ	Բավրա համայնք	*****	100Mb/s*
52.	<<Շիրակ>> օդանավակայանի մաքսակետ	Շիրակ օդանավակայան	*****	100Mb/s
53.	Գուգարքի տարածաշրջանային ՄՏ	Ք.Վանաձոր, Մոսկովյան-44	*****	100Mb/s
54.	Բագրատաշենի մաքսակետ	Բագրատաշեն համայնք	*****	100Mb/s
55.	Այրում-Ջիլիզա մաքսակետ	Այրում երկաթուղային կայարան	*****	100Mb/s
56.	Գոգավան-Պրիվոլնոյե մաքսակետ	գ.Գոգավան	*****	100Mb/s*
57.	Սյունիքի տարածաշրջանային ՄՏ***	Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ.	*****	100Mb/s**
		Սյունիքի մարզ, Շաքիի համայնք	30.11.2016	100Mb/s
58.	Մեղրիի մաքսակետ	Կարճևանի համայնք	*****	100Mb/s
59.	Հայփոստ մասնաճյուղ 0017	ք. Երևան, Սասի թաղ 7 փ. 86 շ.	*****	3Mb/s
60.	Հայփոստ մասնաճյուղ 0020	ք. Երևան, Էրեբունի 31	*****	3Mb/s
61.	Հայփոստ մասնաճյուղ 0054	ք. Երևան, Դավիթաշեն 17/6, 3-րդ թաղ.	*****	3Mb/s
62.	Հայփոստ մասնաճյուղ 0060	ք. Երևան, Խանահայան թաղ.7/1	*****	3Mb/s
63.	Հայփոստ մասնաճյուղ 0068	ք. Երևան, Կորդինյան 7-21/7	*****	3Mb/s
64.	Հայփոստ մասնաճյուղ 0090	ք. Երևան, Ա.Միկոյան 1	*****	3Mb/s
65.	Հայփոստ մասնաճյուղ 0014	ք. Երևան, Շիրվանզադե 2	*****	3Mb/s
66.	Հայփոստ մասնաճյուղ 0059	ք. Երևան, Ն Նորք 9-րդ գ., Վիլնյուսի 6	*****	3Mb/s
67.	Հայփոստ մասնաճյուղ 0061	ք. Երևան, Արշակունյաց 54	*****	3Mb/s
68.	Հայփոստ մասնաճյուղ 0064	ք. Երևան, Ռուֆֆու 92	*****	3Mb/s
69.	Հայփոստ մասնաճյուղ 0001	ք. Երևան, Թումանյան 16-1	*****	3Mb/s
70.	Հայփոստ մասնաճյուղ 0086	ք. Երևան, Շիրակի 56	*****	3Mb/s
71.	Հայփոստ մասնաճյուղ 0087	ք. Երևան, Ավանեսովի 8/3	*****	3Mb/s
72.	Հայփոստ մասնաճյուղ 0091	ք. Երևան, Հ.Սարկավագի 123	*****	3Mb/s
73.	Հայփոստ մասնաճյուղ 0096	ք. Երևան, Դ.Մալյան 15/16	*****	3Mb/s
74.	Հայփոստ մասնաճյուղ 0910	Մեծամոր, Ազատության 17	*****	3Mb/s
75.	Հայփոստ մասնաճյուղ 1109	Էջմիածին, Զվարթնոց թաղ.,Երևանյան խճ.	*****	3Mb/s
76.	Հայփոստ մասնաճյուղ 2310	Ծաղկաձոր, Ն.Մագիստրոսի փ.	*****	3Mb/s

77.	Հայփոստ մասնաճյուղ 3701	Ջերմուկ, Շահումյան 14	*****	3Mb/s
78.	Հայփոստ մասնաճյուղ 3309	Քաջարան Լ.Նոնագործների 4/2	*****	3Mb/s
79.	Հայփոստ մասնաճյուղ 3403	գ.Ագարակ, Հովհաննիսյան 9/1	*****	3Mb/s
80.	Հայփոստ մասնաճյուղ 3901	ք.Դիլիջան, Մյասնիկյան 62	*****	3Mb/s
81.	Հայփոստ մասնաճյուղ 0801	գյուղ Այնթապ	*****	3Mb/s
82.	Հայփոստ մասնաճյուղ 0019	ք. Երևան, Բաղրամյան 23	*****	3Mb/s
83.	Հայփոստ մասնաճյուղ 1901	Ստեփանավան, Միլիոնի 5	*****	3Mb/s
84.	Հայփոստ մասնաճյուղ 2214	Բյուրեղավան, Կիրովի 5	*****	3Mb/s
85.	Հայփոստ մասնաճյուղ 2215	գյուղ Գառնի	*****	3Mb/s
86.	Հայփոստ մասնաճյուղ 1826	ք. Սպիտակ	*****	3Mb/s
87.	Հայփոստ մասնաճյուղ 1601	Վարդենիս, Երիտասարդության 15	*****	3Mb/s
88.	Հայփոստ մասնաճյուղ 4201	ք.Քարվաճառ, Մաշտոցի 29	*****	3Mb/s
89.	Հայփոստ մասնաճյուղ 3801	Վայք, Ջերմուկի խճ. 12	*****	3Mb/s
90.	Հայփոստ մասնաճյուղ 0018	ք. Երևան, Տիգրան Մեծ 36	*****	3Mb/s
91.	Հայփոստ մասնաճյուղ 0088	ք. Երևան, Շիրազի 32	*****	3Mb/s
92.	Հայփոստ մասնաճյուղ 3104	ք. Գյումրի, Ռիժկովի 5	*****	3Mb/s
93.	Հայփոստ մասնաճյուղ 2002	ք.Վանաձոր, Վարդանանց 49	*****	3Mb/s
94.	Հայփոստ մասնաճյուղ 0601	ք.Արարատ, Շահումյան 99	*****	3Mb/s
95.	Հայփոստ մասնաճյուղ 0901	ք. Արմավիր, Հանրապետության 30	*****	3Mb/s
96.	Հայփոստ մասնաճյուղ 2301	ք. Հրազդան, Զ.Անդրանիկի 3	*****	3Mb/s
97.	Հայփոստ մասնաճյուղ 1709	Ախթալա, 6-րդ փողոց	*****	3Mb/s
98.	Հայփոստ մասնաճյուղ 2208	ք.Աբովյան 3 րդ մրկ. 13ա	*****	3Mb/s
99.	Գանձապետարան	Տիգրան մեծ 4	*****	100Mb/s
100	Գունավոր մետաղներ	Մարշալյան 5	*****	100Mb/s

* Իրականացվում է ՀՀ ՖՆ -ի կողմից տրամադրվող օպտիկամանրաթելային կապուղու և սարքավորումների սպասարկում

** Կարող է իրականացվել նաև ոչ օպտիկամանրաթելային կապի միջոցներով

***Վերջնական ամսաթվերը ենթական են ճշգրտման կախված շենքերի շահագործման հանձնելու ամսաթվից. նոր հասցեում կապի տրամադրումից հետո նախկին հասցեում կապը դադարեցվում է

**** Պետք է ապահովվի իրարից անկախ, երկու տարբեր ճանապարհներով քաշված կապուղիների միջոցով

***** Ծառայության մատուցումը իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

****** առանձնացնել լարային հեռահաղորդակցական գանցով հասանցի տվյալների փոխանցման տրաֆիկը

Երկրորդ չափաբաժին
Արբանյակային կապի ծառայություններ
/Տեղեկատվական արբանյակային կապուղիների վարձակալության և սպասարկման ծառայություններ/

Արբանյակային կապի վարձակալումն ապահովում է արբանյակային կապի օպերատոր PLENEXIS GmbH ֆիրման:

Շահագործվող VSAT դասի արբանյակային կապի կայանների տեխնիկական բնութագրերն են՝

Կապի ծառայությունը տրամադրվում է INTELSAT 904 $60°% SPOT 1 Ku տիրույթի արևելյան ճառագայթից վերգետնյա արբանյակային կայաններով: Տեխնիկական տվյալներն են՝

- Mini Hub Router – Inbound/Outbound
- iDirect NMS Server Software
- iDirect Protocol Processor System Software, iDirect Graphical User Interface (GUI) Client Software
- արբանյակային iDirect INFINITY 3100 Series ֆիրմայի մոդեմներ
- 1.8 տրամագծով CHANNEL MASTER (USA) ֆիրմայի ալեհավաք կենտրոնական կայանների համար
- 1.2 մ տրամագծով CHANNEL MASTER (USA) ֆիրմայի ութ ալեհավաքներ տերմինալային կայանների համար
- 3100 սերիայի PARADISE DATACOM (USA) ֆիրմայի ընդունիչներ և հաղորդիչներ՝

ա/ ընդունիչ – LNB Ku-Band (10.95-11.07 GhZ)

բ/ հաղորդիչ – 2 վատ հզորությամբ BUC Ku-Band (14.0-14.5 GhZ):

Սպասարկման պայմանները՝

- Համակարգի կայանները Տեղեկատվական կենտրոնի հետ պետք է աշխատեն 768 kb/s սիմետրիկ արագությամբ, որը օգտագործվում է կենտրոնական կայանի /Երևան/ և 8 տերմինալային կայանների /Բագրատաշեն, Այրում, Գոգավան, Բավրա, Սեղրի, Սիսիան, Գյումրի, Վանաձոր/ միջև:
- Արբանյակային ցանցը սպասարկող կազմակերպությունը պետք է տրամադրի հրատապ կապի տվյալներ, որի միջոցով օրվա ցանկացած ժամին ՀՀ ՖՆ-ի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները կարող են տեղեկացնել ցանցի խափանումների մասին:
- Արբանյակային ցանցը սպասարկող կազմակերպությունը պետք է իրականացնի համակարգի շահագործման պրոֆիլակտիկ աշխատանքներ, այդ թվում՝

ա/ սարքավորումների մաքրում, թույլ օդակների հայտնաբերում և սարքինացում

բ/ արբանյակային ալեհավաքի մեխանիկական մասի ամրացում, ուղեծրից շեղվելու դեպքում վերականգնում:

- Արբանյակային ցանցը սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովի անընդմեջ կապ և կապը լինի առանց ընդհատումների:

Ծառայության մատուցման ժամկետը

Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան Տերյան 19, բն 4
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 900011017101	Հ/Հ 217001264993001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝	«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Արզումանյան	**Գ.Բալայան**

Հավելված 2
«11» փետրվար 2016թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2016 թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը Տարի
1	4232	Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ		18 490 000	36 980 000	55 470 000	73 960 000	92 450 000	110 940 000	129 430 000	147 920 000	166 410 000	184 900 000	221 880 000	**221 880 000**
2	4239	Արբանյակային կապի ծառայություններ		3 993 500	7 930 400	11 980 500	15 974 000	19 967 500	23 961 000	27 954 500	31 948 000	35 941 500	39 935 000	47 922 000	**47 922 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Արզումանյան

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան Տերյան 19, բն 4
ՀՎՀՀ 00024873
Հ/Հ 217001264993001
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Թսպյան

Հավելված 3
«11» փետրվարի 2016թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ԾՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ __» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «__ __» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«11» փետրվարի 2016թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ՇՀԾՁԲ-16-1-15/18 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն